Յիշատակարան «Ոսկեկող աւետարան»ին ի Կուլաբ գ.

«Փառք փառաւորեալ անձանցն և օրհնութիւն միակամ բնութեանց և գոհութիւն գոհարանեալ իսկութեանցն, երից անձնաւորութեանցն և անբաժանելի յատկութեանցն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ յաւիտեանս»։

«Գրեալ աւարտեցաւ սուրբ Աւետարանս ի թվին Հայոց ՌՃԼԲ. որք հանդիպէք սմա կարդալով կամ յօրինակելով յիշել աղաչեմ ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սուրբ աւետարանիս զԱստուածասէր և հաւատարիմ Խոճայ Պաղդասարն և եդ յիշատակ ի գեօղն յԱգարակ, ի դուռն սուրբ Յովհաննէս եկեղեցւոյն ի փրկութիւն հոգւոյ իւրոյ և ծնողացն հօրն Մովսէսին մօրն Կուլխաթունին որդւոցն Սրապիօնին Այվազին և կողակցացն Մարիամին և ամ. ազգատոհմին, կենդանիքն և հանգուցեալքն, որք յիշեն սրտի մտօք, յիշեալ լիցին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ . . . »։

«Թվն. ՌՃՁԹ. Յունվարի. զումն որ ես Դէբա Թաղեցի Ղուկասի որդի մահտեսի Եփրեմ, իմ եղբայր Յոհանն, Մկրտիչն, Ղազարն, իմ քուր Մահմուրն, Մարիանն, որ տվանք այս ս. Աւետարանս Ստեփաննոս եկեղեցւոյն մաքուբ որ յիշատակ լինի, ինչ մարդ որ դուս տալոյ լինի կամ ծախելոյ լինի, թէ քահանայ թէ աշարական, թէ գեղու մէջումն ծախելոյ լլինի, պարտական լլինի յօրն յաւիտենական»։

«Կրկին յիշատակ է սուրբ աւետարանս Պապումի և կենակցին Հոռոմիմին, Այվազին և կենակցին Դաստագիւլին, Բունեաթին, և կենակցին Մարեանին, և որդւոցն սոցին Յարութիւնին, և արեան արու մերձաւորացն և ազգատոհմին, սոցին որ ստացան և ազատեցին զսայ ի ձեռաց անօրինաց և ետուն ի դուռն սուրբ Աստուածածին անուն եկեղեցին, ի հոգւոյ փրկութեան, անջինջ յիշատակ իւրեանցն և իւրեանց ննջեցելոցն ամէն, ի թվոջն Հայոց ՌՃՂԶ. ին Ապրիլի Դ ին գրեցաւ»։

Կուլաբ տեսած եմ «Պապ աւետարան», որ Շիրակ գաւառի Աղին գիւղէն բերուած էր, որոյ յիշատակարանն է։